ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

14 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

14 մայիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 28 անդամներ:

Բացակա էին՝ Սոֆիա Ոսկանյանը, Արտակ Աշիկյանը, Արմեն Եփրեմյանը, Արաքսյա Համբարձումյանը, Արտավազդ Մարգարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Խորեն Ուստյան, Վարդան Այվազյան, Գոհար Հովսեփյան, Միեր Գևորգյան, Մերի Մելիքյան, Անահիտ Խաչատրյան, Աննա Հովհաննիսյան, Արսեն Եփրեմյան, Զարեհ Հակոբջանյան, Նարեկ Գալստյան, Նունե Հովհաննիսյան, Խորեն Հովակիմյան, Ահարոն Հակոբյան, Սարգիս Գրիգորյան, Արմեն Ալեքսանյան, Մանուկ Հարությունյան,

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի մայիսի 14-ի չորրորդ հերթական նիստի օրակարգը՝

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԱԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

1.3. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.5. «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.6. «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.7. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 80-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.9. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՖԵԼԻՔՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.14. «ԱՍ ԱՎԱՋ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 03-055-0185 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ 10,7195 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15. «ՍԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇԻ ԱԿԽ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ <ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ> ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 5,046208 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.17. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.18. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.19. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.20. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑ 79/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱՎԻՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.24. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 98-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԱԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով և հիմք ընդունելով «Օհան Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Հ.Ավագյանի 06.05.2025 թվականի Պ-5823 գրությունը, Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) 11.01.02.51 գործառական դասակարգման / վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածը պակասեցնել 5 000 000/ հինգ միլիոն / ՀՀ դրամով .

2)08.02.01.51 գործառական դասակարգման /գրադարանային ծառայություններ/ 4655 հոդվածն ավելացնել 5 000 000 / հինգ միլիոն /ՀՀ դրամով.

2.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին «Օհան Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերելուց և ներկայացնելուց հետո կատարելու համապատասխան ֆինանսավորում:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 392-Ն որոշման 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 99-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքում սկսել 2025 թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Արտաշատ համայնքի 2025 թ-ի բյուջեում հատկացնել 45.000 000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 15.000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել կրթության, մշակույթի, սպորտի, բնապահպանության, գյուղատնտեսության, զբոսաշրջության, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտները որպես առաջնահերթություն:

7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2023-2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 100-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԶԱՐԵՀ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին, Արտաշատ համայնքի ավագանու անդամներին (իրենց համաձայնությամբ) պաշտոնական գործուղումներում ներգրավելու որոշում կայացնելու՝ համաձայն ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ-ի թիվ 2335-Ն որոշման և գործուղումները կարգավորող այլ իրավական ակտերի:

2. Գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարել բյուջեի համապատասխան տնտեսագիտական հոդվածից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 101-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 23-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 09.02.02.51 /հանրակրթական ուսուցում/ գործառնական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ Արտաշատ համայնքի ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների համար սահմանել դրամական խրախուսում՝ 2620000 /երկու միլիոն վեց հարյուր քսան հազար / ՀՀ դրամի չափով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 102-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 515-Ն որոշումը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. «Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի «ԼՈՒՍՆԹԱԳ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 103-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍՆԹԱԳ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. 2025 թվականի հունիսի 1-ից թույլատրել «Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի «ԼՈՒՍՆԹԱԳ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել հինգերորդ խումբ:

2. Հաստատել՝ Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 347-Լ որոշման թիվ 31 հավելվածը նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 104-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 347-Լ որոշման թիվ 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 105-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 80-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԳԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Ուժը կորցրած ճանաչել Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի «Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 10-ի N 135-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 80-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 106-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐԳԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 107-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 35.10-րդ հոդվածի 8-րդ մասը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի «Արտաշատ համայնքի հաշվեկշռում հաշվառված թվով 31 տրանսպորտային միջոցները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին» N 83-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը չստորագրելու կամ հետագա վճարումները 8-օրյա ժամկետում չկատարելու կամ պայմանագիր չկնքելու դեպքերում աճուրդը համարվում է չկայացած, որի դեպքում նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքային բյուջե»:

2) որոշման 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գույքի առաջին աճուրդը կազմակերպել և անցկացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չորս ամսվա ընթացքում»:

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետով՝

«12.1. Լոտի վաճառքի ամբողջական գինը աճուրդում հաղթող մասնակցի կողմից վճարելուց հետո 10-օրյա ժամկետում կնքել առուվաճառքի պայմանագիր»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 108-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1023-1024-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատի համայնքապետարանի և «Լևան» ՍՊԸ-ի միջև 20.03.2025 թվականին կնքված թիվ ԱԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/11-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռք բերմամբ պայմանավորված՝ (Բազկաթոռ ղեկավարի՝ 1 հատ, արժեքը՝ 192000 /մեկ հարյուր իննսուներկու հազար/ ՀՀ դրամ), (Աթոռներ՝ 2 հատ, արժեքը՝ 192000 /մեկ հարյուր իննսուներկու հազար/ ՀՀ դրամ) և 1025, 1026 և 1027-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատի համայնքապետարանի և «Սուր Արթուր» ՍՊԸ-ի միջև 20.03.2025 թվականին կնքված թիվ ԱԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/11-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռք բերմամբ պայմանավորված՝ (Աթոռներ՝ 20 հատ, արժեքը՝ 3168000 /երեք միլիոն հարյուր վաթսունութ հազար/ ՀՀ դրամ), (Չհրկիզվող պահարան՝ 1 հատ, արժեքը՝ 128700 /մեկ հարյուր քսանութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ), (Կախիչ՝ 1 հատ, արժեքը՝ 49500 /քառասունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 109-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 347-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Արտյոմ Ստեփանյանի 02/05/2025 թվականի Հ-5339 գրությունը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» /այսուհետ՝ որոշում/ N 347-Լ որոշման թիվ 48 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 110-Լ)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՖԵԼԻՔՍ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, Մխչյան գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող Նարեկ Գալստյանի՝ 05 մայիսի 2025 թվականի թիվ Ա-5855 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի Շահումյան փողոցի թիվ 35 տան բնակիչ Ֆելիքս Սուրենի Ավետյանի՝ 16 ապրիլի 2025 թվականի Ք-5082 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Ֆելիքս Սուրենի Ավետյանին՝ հրդեհից այրված բնակելի տան տանիքը վերանորոգելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԱՍ ԱՎԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 03-055-0185 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ 10,7195 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ԱՍ ԱՎԱԶ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Միրոյանի դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել նախնական համաձայնություն «ԱՍ ԱՎԱԶ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-055-0185 թաղամասում 10,7195 հա հողամասում ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նախաձեռնությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ա)*

Ա. Մկրտչյանը չի մասնակցել հարցի քվեարկությանը, քանի որ տեղեկացրել է շահերի բախման իրավիճակի մասին (կցվում է):

ԼՍԵՑԻՆ

«ՍԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇԻ ԱԿԽ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ <ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ> ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով «ՍԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Խ. Աբրահամյանի դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել նախնական համաձայնություն «ՍԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի «Հարավարևելյան» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նախաձեռնությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 5,046208 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 48-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի N 1 եզրակացությունը, հաշվի առնելով օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կնքված ընդերքօգտագործման N Պ-751 պայմանագիրը, N Լ-751 լեռնահատկացման ակտը, օգտակար հանածոյի արդյունահանման N ՇԱԹ-29/751 թույլտվությունը և «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ տնօրեն Ա. Ղուկասյանի 06.05.2025Տ-5901 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Հովտաշեն գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-055-0111-0014 կադաստրային ծածկագրով 5,046208 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության հողամասը օգտակար հանածոյի արդյունահանում իրականացնելու նպատակով, առանց մրցութի, վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Վճարի մեկնարկային չափ սահմանել տարեկան 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետը սահմանել 9 (ինը) տարի:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 16-ի «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,084 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 90-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) որոշման 1-ին կետում «43/2» թիվը փոխարինել «43/3» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 8-ի «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 195-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Բյուրավան գյուղում գտնվող հենասյունները՝ 3.00մ d=57մմ 45հատ, 3.50մ d=57մմ 4հատ, 5.00մ d=57մմ 7հատ, գազատարը՝ L=289.5մ d=57մմ, 2 հատ բարձրացումը՝ 1.5մ,

1 հատ բարձրացումը՝ 2.0մ, 2 հատ իջեցումը՝ 2.0մ, 1 հատ իջեցումը՝ 3.0մ անհատույց և անորոշ ժամկետով, օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 116-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող 03-001-0174-0021 կադաստարային ծածկագրով 0,00845 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի տվյալների:

2. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 117-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑ 79/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, Քաղաքացիական օրենսգրքի 204-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 21/04/2025 թվականի 03/14.1/6287-2025 գրությունը և «Սեյսմշին» ՍՊԸ-ի շենքի հետազննության արդյունքների տեխնիկական եզրակացությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Թույլատրել քանդել /ապամոնտաժել/ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օրբելի փողոց 79/1 հասցեում գտնվող 1.0296հա մակերեսով 03-001-0165-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում գտնվող 2335,1/2748,4քմ մակերեսով մանկապարտեզի շենքը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 118-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱՎԻՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Գ. Գևորգյանի 16/04/2025 թվականի N ՃՀԱ/238/14205-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեստան գյուղում գտնվող, Գևորգ Արշավիրի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 2,1601հա մակերեսով, 03-011-0240-0008 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահող և կորիզավոր հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 119-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 16-ի N 2/փ-138 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի ապրիլի 30-ի N 01//02926-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող, 03-001-0156-0115 կադաստրային ծածկագրով 0,15898հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գոտևորման նախագծում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 120-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 29 դեկտեմբերի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ջրաշեն բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 2/փ-141 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի մայիսի 07-ի թիվ 01/03056-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ Արտաշատ համայնքի Ջրաշեն գյուղում գտնվող 03-080-0164-0010 կադաստրային ծածկագրով 0,71821հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատեսք բազմամյա տնկարկ հողամասից՝ 0,42124 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գոտևորման նախագծում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 121-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Աբովյան բնակավայրում գտնվող գազատար՝ d=57մմ 113.09 մ երկարությամբ, 21 հատ հենարան՝ d=57մմ h=2.50մ 52.50 երկարությամբ, 1 հատ կոշտ հենարան, Դեղձուտ բնակավայրում գտնվող գազատար՝ d=57մմ 356.39մ երկարությամբ, d=133մմ 9.77մ երկարությամբ, 64 հատ հենարան՝ d=76մմ h=3.0մ, 4 հատ հենարան՝ d=76մմ h=5.0մ 212.0մ երկարությամբ, 2 հատ հենարան՝ d=108մմ h=5.0մ 10.0մ երկարությամբ, մետաղական անշարժ հենարաններ ընդհանուր 2 հատ, գազատար՝ d=57մմ 94.12մ երկարությամբ, 20 հատ հենարան՝ d=57մմ h=3.0մ 60.0մ երկարությամբ, Բարձրաշեն

բնակավայրում գազատար՝ d=57մմ 773.45մ երկարությամբ, d=133մմ 33.09մ երկարությամբ, 131 հատ հենարան՝ d=76մմ, 6 հատ հենարան՝ d=108մմ, 7 հատ անշարժ հենարան, գազատար՝ d=57մմ 58.24մ երկարությամբ, 10 հատ հենարան՝ d=76մմ 30.0մ երկարությամբ, գազատար՝ d=133 մմ 11.70մ երկարությամբ, d=76մմ 270.65մ երկարությամբ, d=57մմ 111.96մ երկարությամբ, 2 հատ հենարան՝ d=108մմ 10.0մ երկարությամբ, 42 հատ հենարան՝ d=76մմ 128.0մ երկարությամբ, 18 հատ հենարան՝ d=79մմ 51.50մ երկարությամբ, անշարժ հենարաններ՝ ընդհանուր 4 հատ: Մրգանուշ բնակավայրում գազատար՝ d=57մմ 42.87մ երկարությամբ, 5 հատ հենարան՝ d=76մմ h=3.0մ, 2 հատ հենարան՝ d=76մմ h=5.0մ, 25.0մ երկարությամբ, գազատար՝ d=133մմ 17.83մ երկարությամբ, 2 հատ հենարան՝ d=108մմ 10.0մ երկարությամբ, գազատար՝ d=57մմ 190.49մ երկարությամբ, d=114.0մմ 34.86մ երկարությամբ, 35 հատ հենարան՝ d=76մմ h=3.0մ 105.0մ երկարությամբ, 5 հատ հենարան՝ d=144.0մմ h=5.0մ 25.0մ երկարությամբ, 2 հատ կոշտ հենարան, գազատար՝ d=57մմ 202.35մ երկարությամբ, d=114.0մմ 19.41մ երկարությամբ, 39 հատ հենարան d=76մմ h=5.0մ 117.0մ երկարությամբ, 2 հատ հենարան d=144.0մմ h=5.0մ 10.0մ երկարությամբ, 2 հատ կոշտ հենարան, գազատար d=57մմ 52.03մ երկարությամբ, 11 հատ հենարան d=76մմ h=3.0մ 33.0մ երկարությամբ, Մրգավան բնակավայրում՝ գազատար d=57մմ 136.51մ երկարությամբ, 26 հատ հենարան d=76մմ h=3.0մ 78.0մ երկարությամբ, 1հատ անշարժ հենարան, գազատար d=57մմ 301.11մ երկարությամբ, 47 հատ հենարան d=76մմ h=4.50մ 211.50մ երկարությամբ, 2 հատ անշարժ հենարան, Դիտակ բնակավայրում՝ գազատար d=108մմ 24.07մ երկարությամբ, 4 հատ հենարան d=108մմ h=5.00մ 20.0մ երկարությամբ, գազատար՝ d=76մմ 137.34մ երկարությամբ, 2 հատ հենարան d=76մմ h=4.00մ, 22 հատ հենարան՝ d=76մմ h=3.00մ, 2 հատ հենարան d=76մմ h=5.00մ 84.0մ երկարությամբ, 1 հատ անշարժ հենարան, գազատար d=57մմ 319.65մ երկարությամբ, 58 հատ հենարան, d=76մմ h=3.00մ, 2 հատ հենարան, d=76մմ, h=5.00մ 184.0մ երկարությամբ, 4 հատ անշարժ հենարան, Մխչյան բնակավայրում՝ գազատար՝ d=76մմ 361.16մ երկարությամբ, 47 հատ հենարան h=3.00մ, 4 հատ հենարան h=5մ, 9 հատ հենարան h=4մ d=76մմ 197.0մ երկարությամբ, գազատար՝ d=108.0մմ 9.31մ երկարությամբ, 2 հատ հենարան h=5.00մ d=108.0մմ 10.0մ երկարությամբ, գազատար՝ d=57.0մմ 145.41մ երկարությամբ, 3 հատ հենարան՝ h=3.0մ 19 հատ հենարան՝ h=1.5մ d=57մմ 37.50մ երկարությամբ, գազատար՝ d=133.0մմ 14.52մ երկարությամբ, 2 հատ հենարան՝ h=5.0մ d=133.0մմ 10.0մ երկարությամբ, 1 հատ անշարժ հենարան, գազատար՝ d=57մմ 99.95մ երկարությամբ, 18 հատ հենարան՝ h=2.50մ d=57մմ 45.0մ երկարությամբ, 2 հատ հենարան h=5.0մ d=76մմ 10.0մ երկարությամբ անհատույց և անորոշ ժամկետով, օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 122-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հինգերորդ հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի հունիսի 11 -ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա /

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԻ ԱԶԱՏՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոռ Նազարյանը

Արտաշատ համայնքի ղեկավար
Կառլեն Մկրտչյանին
«Քաղաքացիական պայմանագիր»
խմբակցության ղեկավար
Արթուր Մկրտչյանից

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածով, տեղեկացնում եմ Ձեզ, որ 14.05.2025 թվականի ավագանու օրակարգի 14-րդ հարցի՝ «ԱՍ ԱՎԱՋ» ԱՊԸ-ի հետ կապված առկա է շահերի բախում, որի պատճառով չեմ մասնակցում տվյալ հարցի քվեարկությանը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ**

14.05.2025թ.
ժամը 12:30

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՈՒՏՔԻ ԹԻՎ Ա-6205
«14» 05 2025թ.